

**«11002. ԱՌԻՏԻՉՄ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ
ԲՈՒԺՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
2021 Թ. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

28 դեկտեմբերի 2020թ.

ք. Երևան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.11.2020թ. N1663-Ա/2 հրամանով ստեղծված հաճնաժողովը դեկտեմբերի 28-ին, ժամը 17.30-ին գումարել է հանձնաժողովի նիստ՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման Հավելվածի 19-րդ կետի համաձայն,

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի՝ «1193.Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի «11002. Առտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայությունների» շրջանակում դրամաշնորհի հատկացման մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպությունների հայտերը գնահատելու նպատակով:

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Ժաննա Անդրեասյան
Անդամներ՝ Սուսաննա Ազատյան
Ռոզա Հարությունյան
Հասմիկ Մանուկյան
Արաքսիա Սվաջյան
Քարտուղար Անահիտ Մուրադյան

Բացակա՝

Թամարա Գյոզայան
Արմինե Օհանյան

Օրակարգ

1. Մրցույթին հայտ ներկայացրած 2 կազմակերպությունների հայտերի ուսումնասիրություն և դրամաշնորհի հատկացման արդյունքների գնահատում:
2. Մրցույթի արդյունքների ամփոփում, հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա:

Հանձնաժողովի անդամները ներկայացրեցին իրենց կողմից գնահատված գնահատման թերթիկները:

Մրցույթի արդյունքներն ամփոփվեցին հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա:

Հանձնաժողովի ներկա թվով հինգ անդամների գնահատման թերթիկների ընդհանուր գնահատականը ըստ կազմակերպությունների կազմեց.

«Քայլ առաջ» սոցիալական հասարակական կազմակերպություն 458 միավոր

«Աուտիզմ ազգային հիմնադրամ» 546 միավոր :

Հանձնաժողովի քարտուղար Ա. Մուրադյանը խնդրեց կատարել հայտերի գնահատման քվեարկություն:

ՈՐՈՇԵՑԻՆ

5 կողմ, 0 դեմ ձայնով

ՀՀ պետական բյուջեի «1193.Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի «11002. Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայությունների» **շրջանակում դրամաշնորհի հատկացման մրցույթում հաղթող ճանաչել** «Աուտիզմ ազգային հիմնադրամ» կազմակերպությունը:

Նախագահ՝




Ժ. Աղդեասյան

Անդամներ՝



Ս. Ագասյան



Ռ. Հարությունյան

Հ. Մանուկյան



Ա. Սվաջյան

Քարտուղար՝



Ա. Մուրադյան